


Հավելված
ՀՀ կառավարության
2009 թվականի «__» «__» -ի
N «__»-Ն որոշման

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



**Գիրք 2. ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ գյուղական համայնքի (բնակավայրի) գլխավոր
հատակագիծ /գրաֆիկական նման/**

- 1.1. Համայնքի դիրքը մարզի տարարնակեցման համակարգում. **Գծ.1.1.**
- 1.1.2.Տարածքի համայիր գնահատման ուրվագիծ. **Գծ.1.1.2.**
- 1.1.3.օգտակար հանածոների տեղադիրքը. **Գծ.1.1.3.**
- 1.1.4.քննության հատուկ պահպանվող տարածքների և պատմամշակութային հուշարձանների տեղաբաշխման ուրվագիծ. **Գծ.1.1.4.**
- 1.1.5.քամու ուղղություններն ու արագությունը. **Գծ.1.1.5.**
- 1.1.6.կենդանիների տեղաբաշխման ուրվագիծ. **Գծ.1.1.6.**
- 1.2. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ (հենակետային հատակագիծ). **Գծ.1.2.**
- 1.3. Տարածքի համայիր գնահատման հատակագիծ. **Գծ.1.3.**
- 1.3.1.ինժեներակրաքանական շրջանացման քարտեզ **Գծ.1.3.1.**
- 1.3.2.սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզ **Գծ.1.3.2.**
- 1.3.3.պատմամշակութային հուշարձանների տարածքները. **Գծ.1.3.3.**
- 1.3.4.հողօգտագործումն՝ ըստ սեփականության ձևերի. **Գծ.1.3.4.**
- 1.4. Տրանսպորտի ուրվագիծ **Գծ.1.4.**
- 1.5. Ինժեներական ենթակառուցվածքների ուրվագիծ **Գծ.1.5.**
- 1.6. Լանդշաֆտային կազմակերպման ուրվագիծ **Գծ.1.6.**
- 1.7. Համայնքի տարածքային զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր)
- 1.7.1. կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն՝ ըստ նպատակային նշանակության փոփոխության. **Գծ.1.7.1.**
- Գիրք 2. ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ բնակավայրի գոտիավորման նախագիծ**
- 2.1. Բնակավայրի զարգացման համար անհրաժեշտ հողատարածքներն ու դրանց կառուցապատման հերթականությունը **Գծ.2.1**
- 2.2. Տարածքի գործառական գոտուորում՝ ըստ օգտագործման տեսակների **Գծ.2.2.**
- 2.3. Տարածքի ծավալատարածական գոտուորում՝ ըստ կառուցապատման չափորոշիչների **Գծ.2.3.**
- 2.4. Տարածքի կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր գծերը՝ հանգույցների կողրդինատային նշանարմանք **Գծ.2.4.**
- 2.5. Մշակութային, կենցաղային և կոմունալ, ինժեներական ենթակառուցվածքների սպասարկման և սանիտարական գոտիների սահմանները **Գծ.2.5.**

Նախաբան

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեժի գյուղական համայնքի գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը՝ բնակավայրի տարածական զարգացման հիմնական ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության ամրագրումն է՝ տրանսպորտային, ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական համայնքի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ Կոտայքի մարզի Զրվեժի գյուղական համայնքի ղեկավարի պատվերով (պայմանագիր N ԿՄՁԳ-ԱՀԶԲ-1) և նախագծային առաջադրանքով: Նախագծային կազմակերպությունն է՝ «ԱՐԽԻՏՈՆ» ՍՊԸ (տնօրեն՝ Լ. Ղալումյան): Նախագծման համար ուղեցույց են ծառայել.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը,

ՀՀ Հողային օրենսգիրքը,

«Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը,

ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն որոշումը,

ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտուորման նախագծերի մշակման, փորձաքննության համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշումը,

ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի N 603-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարաքննության գլխավոր նախագծի» հիմնադրույթները,

Որպես ելակետային նյութեր են օգտագործվել՝

տարրեր տարիներին նախագծային կազմակերպություններում մշակված Զրվեժի գլխավոր հատակագծերը նախագծերը,

Զրվեժի համայնքի տարածքի սեյսմաշրջանացման քարտեզը (մշակված «ՍՊՀԱԾ» ՊՈԱԿ 2005թ.),

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կադաստրային քարտեզները և տեղագրական հանույթները,

ՀՀ շահագրգիռ նախարարությունների, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Զրվեժի գյուղապետարանի, տարրեր կազմակերպությունների Զրվեժին վերաբերող ելակետային նյութերը:

Նախագծում հաշվի են առնված Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից լնդրունված «Եվրոպական մայրցամարի կայուն տարածական զարգացման հիմնարար

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ Արխիտոն ՄՊՀ
սկզբունքներով», Լանջաֆտի Եվրոպական կոնվենցիայով և այլ փաստաթղթերով
ամրագրված տարածական պլանավորման հետ փոխկապակցված դրույթները:

Գ լ ու խ 1. Համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները

1.Համայնքի դիրքը տարաքնակեցման համակարգում, առկա իրավիճակը և տարածական զարգացման պայմանները.

Զրվեծ համայնքի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելյան մասում, քաղաքի անմիջական մոտակայքում, Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում:

Զրվեծ գյուղը պատմականորեն ձևավորված բնակավայր է: Այն հիշատակվում է V դարից: Գյուղի պատմականորեն կազմավորված մասին բնորոշ են նեղիկ, ծուռումուռ փողոցները և մեկ - երկու հարկանի ցածրահարկ բնակելի կառուցապատումը: Դեռևս խորհրդային տարիներին գյուղին կից տեղակայվել են արտադրական ձեռնարկություններ, որոնց շուրջ կազմավորվել է խոշոր բնակելի քանավանը (ա.կ. միկրոշրջանը՝ իր ենթակառուցվածքներով (դպրոց, մանկապարտեզ, խանութներ և այլն): Թեև վերը նշված տարածքները, այսօր չեն մտել համայնքի վարչական տարածքի մեջ, դրանք համայնքում կենտրոնական դիրք են գրավում, կարևոր տեղ զբաղեցնելով բնակավայրի կենսագործութեայան մեջ:

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծի գյուղական համայնքի տարածքով է անցնում Երևան - Գառնի - Գեղարդ պատմամշակութային և զբոսաշրջային կարևոր հատակագծային հաղորդակցական առանցքը, որը ճյուղավորվում է նաև դեպի Աբովյան տանող ռեկրեացիոն նշանակության ունեցող հիմնական ուղղություններից մեկի վրա: Գառնիի ուղղությամբ Զրվեծին սահմանակից է Զրվեծի ծառաբուծական զբոսայգին: Զբաղեցնելով տարանցիկ դիրք՝ Զրվեծ համայնքի տարածքը կարևոր դեր է խաղում Երևանի ազլոմերացիայի կազմավորման և փոխկապակցված զարգացման տեսանկյունից: Ներկայումս այն երկայնական և լայնական ուղղություններով ձգված, անկանոն ձևի տարածված հատակագծային կառուցվածքով մի բնակավայր է:

Զրվեծում ներկայումս տեղադրված են «Գեղարդ» մսամթերքի կոմբինատը, «Գամմա» պահածոյի գործարանը, բետոնի հանգույցը, քարի մշակաման և այլ արտադրամասեր: Գյուղին հարակից «Մայակ» թաղամասի հարևանությամբ ժամանակին տեղակայվել էին խոշոր արտադրական ձեռնարկություններ, որոնց նախկին հզորություններն ու տարածքներն այսօր մասնակի են օգտագործվում:

1970-1980 թվականներին Զրվեծի հյուսիս-արևելյան մասում տեղադրվեցին տարքեր կազմակերպությունների այգեգործական ընկերությունների հողամասերը, որոնք այսօր բավականին մեծ զանգված են կազմում և ընդգրկված են համայնքի սահմաններում՝ որպես

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ Արդիշտոռն ՄՊՀ
բնակավայրի հողեր: Վերջին տարիներին Երևան-Գառնի ավտոխճուղու երկու կողմերում
արագ տեմպերով կառուցվում են զվարճանքի և հասարակական սննդի բազմապիսի
օրինական հողեր (հյուրանոցներ, խաղատներ, ռեստորաններ, հարսանյաց հանդեսների սրահներ և
այլն): Բնակավայրը, համայնքի տարածքում հողերի սակավության պատճառով, ներկայում
գարգանում է հիմնականում նախկին գյուղատնտեսական հողերի հաշվին:

1.2. Տարածքի համալիր գնահատականը

1.2.1. Քնակլիմայական պայմանները, բուժական և ռեկրեացիոն ռեսուրսները

/Գրաֆիկական մաս, գծագիր 1.1-ից 1.1.6./

Հարթավայրի և նախալեռների կցվանքատեղում հրաբխային ապարները մերկ են և
հաճախ հողածածկույթի փոխարեն երևում է հզոր ժայռոտ գրահը: Հրաբխային ապարները
իրենց ամբողջ հզորությամբ պարզորոշ երևում են գետերի կանյոններում: Երևանը հյուսիս-
արևելքից և հյուսիսից գոտուորող Քանաքեռի բարձրունքը և Նորքի բլրազնագվածը ձևավորում
է պլատոյաձև սեղանատիպ զանգված, որը $10-15^{\circ}$ թերքածությամբ աստիճանաբար
բարձրանում է մինչև 1250 մ բարձրություն, ներառելով Զրվեծ բնակավայրը:

Արարատյան հովտի արևելյան կողը Գեղամա լեռնաշղթան է՝ լավային ծածկույթով
ուռուցիկ-վահանաձև մակերևույթի վրա վեր խոյացող հրաբխային կոներով: Լեռնաշղթայի
միջին բարձրությունը 2800 մ է: Գեղամա լեռների զարդարական լանջերը համարյա ողողամաշված
չեն, ինչը բացատրվում է կլիմայի չորությամբ: Լեռների գագաթային մասում հստակ երևում են
հնագույն սաղցապատումների հետքերը:

Լեռնային գոտու մակերևույթը բավականին բարդ է: Աժդահակի գագաթամերձ
բարձրավանդակը կազմված է հրաբխային ապարներից՝ մասնատված բազմաթիվ խորը
հովիտներով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն ալիքաձև և սանդղավոր են, կտրտված
ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատներով, որոնք վարարում են գարնանային ձնիալքերի
ժամանակ: Միջին լեռնային մասում գերակշռում են չորրորդային անդեգիտո-բազալտներ և
բազալտներ: Դեպի Նորք – Զրվեծ սարահարթ իջնող լեռնալանջերը խիստ մասնատված են
երողիայի ենթարկված հովիտներով և ձորակային ցանցով, որոնցով ձնիալքի և գարնանային
վարարումների ժամանակ հոսում են սելավներ: Դրանց մի մասը իրացնում է Գետառ գետը,
իսկ մյուս, հիմնական մասը չի առաջացնում մակերեսային հոսք, այլ ներծծվում է: Շատ
տեղերում ներծծված ջրերը երկրի մակերես են դուրս գալիս քաղցրահամ ջրերի աղբյուրների
ձևով:

Զրվեծ-Ողջաբերդ տարածքում գերիշխում է տափաստանային, իսկ լեռնալանջերին՝
ալպիական լանդշաֆտը, որը ծառայում է որպես արոտավայր:

Տարածքի կլիմայական պայմանները ձևավորվում են միջին լայնությունների օդային
զանգվածների անմիջական ազդեցությամբ, չոր մերձարևադարձային օդային զանգվածների

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեժ գյուղական համայնքի գյուղավոր հատուկազիծ Արխիտոռն ՄՊՀ
Աերխուժումներով տարվա տաք եղանակներին, ինչպես նաև բնեուային զանգվածների
աղվեկցիա՝ տարվա ցուրտ ամիսներին: Կլիման այստեղ առանձնանում է շեշտված
կոնտինենտալ /չորային/ ռեժիմով, երբ օդի ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդը հասնում է
 $27,5^{\circ}$ C, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը՝ $8,8^{\circ}$ C: Շեշտակիորեն ընդգծված է նաև
ջերմաստիճանի օրական տատանումը: Մթնոլորտային տեղումները համեմատաբար քիչ են՝
450 մմ տարեկան, գարնանային մաքսիմումով՝ 171 մմ:

Քամու տարեկան միջին արագությունը 2-3 մ/վրկ է: Հարաբերական խոնավությունը
ունի պարզ արտահայտված տարեկան և օրական ընթացք՝ ամռանը՝ 46-52 %, ձմռանը՝ 74-81
%: Զյան ծածկույթով օրերի թիվը փոքր է, սակայն առանձին տարիներին ձևավորվում է կայուն
և խորը ձյան ծածկույթը: Տարածաշրջանը հարուստ է արևի ճառագայթային էներգիայով,
ուլտրամանուշակագույն ճառագայթների բալանսն ամբողջ տարվա ընթացքում դրական է:
Կլիմայական պայմանների մասին ավելի մանրամասն նկարագրված է «Զրվեժ համայնքի
առողջարանային և բժշկա-կլիմայական բնութագիրը» բաժնում:

«Զրվեժ» անտառապուրակային համալիրը հիմնվել է 20-րդ դարի 60-ական
թվականներին պետական անտառային ֆոնդի տարածքում: Անտառապուրկի ընդհանուր
մակերեսը կազմում է 400 հա: Ծառերի տեսակային կազմը ներկայացված է սոճու, եղևնու,
թեղու, բարդու, հացենու և այլ ծառա-թփային բույսերի տարբեր տեսակներով: 1990-ական
թվականների տնտեսական և էներգետիկ ճգնաժամը չի շրջանցել և այդ համալիրը, որը
ներկայում գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի վերականգնողական մեծ ծավալի
աշխատանքների և վերակառուցման: Վերականգնումից հետո, բնականաբար,
անտառապուրակի էկոհամակարգը դրական ազդեցություն կրողնի Զրվեժ գյուղական
համայնքի վրա:

Զրվեժի հանգստի գոտին բնութագրվում է որպես կլիմայական առողջարանային համալիր:
Այն էապես տարբերվում է հանրապետության մյուս շրջաններից կլիմայարուժության
բարենպաստ պայմաններով: Տարվա տաք եղանակներին հնարավոր է օդային և արևային
լոգանքների ընդունում՝ ապրիլի 20-ից մինչև հոկտեմբեր ներառյալ: Գարնան երկրորդ կեսը
առանձնանում է ջերմային ռեժիմի օպտիմալ արժեքներով՝ ապրիլի երկրորդ տասնօրյակից
սկսած ձևավորվում է կլիմայարուժության կոմֆորտային ռեժիմ: Մայիսի 20-ից և հունիսին 14-
16 օր դիտվում են օդային լոգանքների կոմֆորտային, իսկ 5 օր դիսկոմֆորտային երբ
էկվիվալենտ էֆեկտիվ ջերմաստիճանը $\text{ԵԵՏ} > 23^{\circ}$ պայմաններ /աղյուսակ N13/: Հուլիս-
օգոստոս և սեպտեմբեր ամիսներին 15 օր ամսվա ընթացքում ձևավորվում են
դիսկոմֆորտային պայմաններ: Կլիմայական պայմանների անբարենպաստ ազդեցությունից
խուսափելու նպատակով անհրաժեշտ է կիրառել համապատասխան միջոցառումներ՝ համայնքի
տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային աշխատանքներ
իրականացնելիս:

Երևանի կենտրոնին և մյուս հարակից միկրոշրջաններին ամռան ամիսներին բնորոշ՝
արևի ճառագայթումը, օդի բարձր ջերմաստիճանը, մետեորաբերի զգալի ամպլիտուդաները,

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ Արդիշտոն ՄՊՀ
օդի և հողի արտահայտված չորությունը մեղմելու տեսանկյունից, ինչպես նաև մաքուր և սառը
լեռնային օդի ներհոսքն ավելացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում
անցկացնել որոշակի միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն գյուղավոր հատակագիծ
իրագործման փուլում:

Միկրոկլիմայական և սանիտար-հիգիենիկ տեսակետից Զրվեժում ձևավորվում են
առավել բարենպաստ ջերմառադիացիոն, խոնավության և աէրացիոն պայմաններ (Զրվեժի
տարածքում մթնոլորտում թթվածնի պարունակությունը ձմռանը մինչև 8 գր/մ³ ավել է, քան
Երևանի կենտրոնում): Շրջապատող բարձրունքների լանջերին նպատակահարմար է
կառուցել տեռասային տիպի ցածրահարկ շենքեր՝ հնարավորիս ընդարձակելով կանաչապատ
տարածքները: Զմեռային կլիմայարուժության համար նախատեսվող կառույցներ
նախագծելիս առաջարկվում է կիրառել լուսաբափանցող նյութեր, որոնք անցկացնում են
ուլտրամանուշակագույն ճառագայթների դիապազոնի 85 և ավելի տոկոսը, ընդ որում՝
ապակեպատ մակերևույթներն անհրաժեշտ է տեղադրել դեպի արևահայաց կողմ:

Զրվեժում հյուսիսից և հյուսիս-արևելքից ամռանը փշում են ուժեղ լեռնա-հովտային
քամիներ, ուստի նպատակահարմար է կիրառել քամապաշտպան միջոցառումներ:

Վերը նշված միջոցառումներին զուգահեռաբար անհրաժեշտ է իրականացնել նաև
հակաաղմկային միջոցառումներ, հատկապես Երևան-Գառնի մայրուղու հարակից
տարածքներում:

Առաջարկվում է ձմեռային սպորտային միջոցառումների համար օգտագործել նաև Գեղամա
լեռների հարավ-արևմտյան լանջերը՝ կիրառելով ճոպանուղու շինարարությունը ստորոտից
դեպի գագաթ: Այդ լանջերը Զրվեժի առողջարանային համալիրի գարգացման համար
կծառայեն որպես հանգստի արքանյակային գոտիներ՝ բարձրլեռնային սպորտային
միջոցառումներ անցկացնելու նպատակով:

Զրվեժ-Ողջարերդ տարածքի հեռանկարային զարգացումը առաջարկվում է դիտարկել
հիմնականում որպես ռեկրեացիոն գոտի, սահմանափակելով արդյունաբերական
նշանակության օբյեկտների հետագա տեղադրումը:

Զմեռը համեմատաբար կարճ է, չափավոր ցուրտ, հունվարյան $-5,0^{\circ}$ միջին ամսեկան
ջերմաստիճանով: Գերիշխում են “չափավոր ցուրտ” եղանակային տիպը, երբեմն էլ
տաքացումներով եղանակները: Գերազանցում է անտիցիկլոնային /բարձր ճնշման/ դաշտը,
որն էլ արտահայտվում է բացառապես անհողմ, խաղաղ եղանակներով: Նշված իրավիճակն էլ
իր հերթին բերում է ենթականվերսիոն ամպամածության և մթնոլորտի ախտոտվածության
մեծացմանը: Զմռանը եղանակային ռեժիմը կրում է կայուն բնույթ, որը միանգամայն դրական
ազդեցություն ունի ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ օրգանիզմի վրա: Այս դեպքում նվազում
են սիրտ-անոթային իիվանդությունների կրկնվածության տոկոսը, մետեորուա ռեակցիաները:
«Զգալի սառնամանիքներով» /միջին օրեկան ջերմաստիճանը $-12,5^{\circ}$ -ից $-22,5^{\circ}$ / եղանակային
տիպը հազվագյուտ երևույթ է, որն արկտիկական օդային զանգվածի ներխուժման, ինչպես
նաև Միքրոյան անտիցիկլոնի ակտիվացման արդյունք է: Այս պրոցեսների հետևանքով

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեժ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ Արդիտոն ՄՊՀ
դիտվում է օդի ջերմաստիճանի շեշտակի նվազում: Զրվեժի տարածքում ձևավորվում են ինվերսիայի երևոյթներ, այսինքն, ըստ բարձրության՝ Երևանից դեպի Զրվեժ-Գառնի, օդի ջերմաստիճանը նվազելու փոխարեն աճում է: Առաջարկվում է այս պրոցեսի վրա հատուկ ուշադրություն դարձնել և չկողմնորոշվել մայրաքաղաքի ջերմային ռեժիմի տվյալներով, քանի որ Զրվեժում ձևավորվում է յուրահատուկ հիգրոթերմիկ ռեժիմ: Կապված Զրվեժ-Ողջաբերդ տարածքի ֆիզիկա-աշխարհագրական դիրքի, Գեղամա լեռների մոտիկության և տեղանքի լանդշաֆտի հետ ինվերսիաները այստեղ հաճախակի երևոյթ են:

Վերջին տարիներին մայրաքաղաքի ռեկրեացիոն և էկոլոգիական փոփոխությունների, ինչպես նաև Նորքի այգիների զգալի չափերի իրացման հետևանքով փոփոխություն է կրել Երևանի ձմեռային եղանակների ռեժիմը: Այս տեսակետից Զրվեժի տարածքում ձմեռային եղանակները շահավետորեն տարբերվում են: Այստեղ դիտվում են արևոտ, անհողմ, համեմատաբար բարձր ջերմաստիճաններով եղանակներ: Եղանակային ռեժիմը, ունենալով հատուկ բժշկա-կենսաբանական նշանակություն, համարվում է Զրվեժի ձմեռային ռեժիմի դրական բնութագրերից մեկը: Օդի ոչ շատ ցածր ջերմաստիճանը գուգակցված արևոտ չափավոր ցուրտ եղանակի, ձմեռային լեռնային բնապատկերի գեղեցկության էմոցիոնալ ազդեցության հետ կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ մարդու վրա: Զրվեժի տարածքի բնական տեռասաները կարելի է օգտագործել որպես դահուկուղիներ կամ ցատկահարթակներ դահուկա-սպորտային միջոցառումների կազմակերպման համար: Զեռուցման սեզոնը սկսվում է նոյեմբերի 5-ից, ավարտվում ապրիլի 12-ին, տևողությունը 158 օր:

Ամառը երկարատև է՝ մայիսի 10-ից մինչև հոկտեմբերը ներառյալ /170 օր/: Առանձնանում է «շոգ չոր» եղանակների զգալի կրկնվածությամբ՝ 8-10, երբեմն 13 օր անընդմեջ: Հովհանսեպտեմբեր ամիսներին գերիշխում է «շատ շոգ, շատ չոր» եղանակային տիպը, եթե օդի միջին ջերմաստիճանը $> 22,5^{\circ}$ -ից /18-20 օր ամսվա ընթացքում, իսկ օգոստոսին՝ 24-25 օր: Ամռան եղանակային ռեժիմը կայուն է, չի խախտվում անգամ հազվադեպ նկատվող ֆրոնտների անցումով: Մթնոլորտային տեղումները նվազագույն են: Այս հանգամանքը նախադրյալներ է ստեղծում Զրվեժ-Ողջաբերդ սարահարթը համարել բարենպաստ կլիմայական գոտի կլիմայարուժության կիրառման համար, հաշվի առնելով, որ մարդու օրգանիզմում ընթացող կենսական պրոցեսների և կենտրոնական նյարդային համակարգի գործունեության վրա էական ազդեցություն ունի ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Ամռան սեզոնում դիտվում են բրվածնի պարունակության նվազագույն արժեքները՝ 238 գր/մ³ /աղյուսակ N 12/: Ցերեկային «շատ շոգ» եղանակների տոքակեզ ռեժիմը մի փոքր մեղմանում է ամառվա սեզոնում այստեղ մշտապես գործող լեռնա-հովտային քամիների ազդեցության շնորհիվ:

Զրվեժ համայնքի տարածքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության էական գործուները բացակայում են:

ա) Մթնոլորտային օդը. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում կոմունալ – կենցաղային օբյեկտների, ջեռուցման գազային անհատական սարքերը, Գեղարդ մսամբերքների կոմբինատի արտադրական կաթսայատունը և ավտոտրանսպորտը:

Մթնոլորտ արտանետումներն աննշան են և կազմում են 10.3 տ/տարի, այդ թվում ազոտի օքսիդներ՝ 4,7 տ/տարի, ածխածնի օքսիդ՝ 5,6 տ/տարի:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշված են PIARC մեթոդիկայով, ըստ համայնքի փողոցներով չափված ավտոտրանսպորտի երթևեկության ինտենսիվության: Համայնքի սահմաններում ավտոտրանսպորտի արտանետումները աննշան են և կազմում են 45.66 տ/տարի, այդ թվում ածխածնի օքսիդ՝ 40,1 տ/տարի, ազոտի օքսիդները՝ 1.67 տ/տարի, ածխաջրածինները՝ 3.89 տ/տարի:

Չուզորդության մեթոդի կիրառմամբ կարելի է ակնկալել, որ առկա արտանետումների դեպքում համայնքի մթնոլորտային օդը համեմատաբար մաքուր է և նրա աղտոտվածությունը ցածր նորմատիվայինից:

Ներկայումս Ջրվեժում օդի աղտոտվածության հսկողություն չի իրականացվում: Եկոմոնիստորինգի կենտրոնը РД 52.04 186-89 համապատասխան գյուղական համայնքի օդի աղտոտության գնահատման համար առաջարկում է ֆոնային կոնցենտրացիաների հետևյալ արժեքները, մգ/մ³:

փոշի	-	0.15
ծծմբային անհիդրիդ	-	0.02
ազոտի օքսիդներ	-	0.008
ածխածնի օքսիդ	-	0.1

Համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը ներկայումս նորմատիվային մակարդակից ցածր է: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով համայնքի ռեկրեացիոն նշանակությունը անհրաժեշտ է նախատեսել մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ:

Հաշվի առնելով նախագծով նախատեսված նոր բնակելի կառուցապատումը և շենքերի կատարելագործված ջերմամատակարարումը, կանխատեսվող անշարժ աղբյուրներից արտանետումները կկազմեն 12.8 տ/տարի, այդ թվում ազոտի օքսիդներ՝ 5.5 տ/տարի, ածխածնի օքսիդը՝ 7.3 տ/տարի, որոնց դեպքում գուգորդության մեթոդի կիրառմամբ կարելի է ակնկալել, որ ազոտի օքսիդների և ածխածնի օքսիդների մերձգետնյա առավելագույն կոնցենտրացիաների գումարը չի գերազանցի 0.15 ՄԹԿ:

Նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա (հաշվի առնելով ավտոտրանսպորտի սպասվող 1.5 անգամ աճը) հաշվարկային ժամկետի ավարտին ավտոտրանսպորտի արտանետումները կրճատել 45.7 տ/տարի ցուցանիշից մինչև 22.6 տ/տարի:

թ) **Մակերևույթային ջրերը.** Համայնքի սահմաններում հոսում է Զրվեժ գետը, որն աղտոտվում է կենցաղային կեղտաջրերով: Համայնքը կոյուղացված չէ և կենցաղային կեղտաջրերը հիմնականում թափվում են աղբահորեր, ինչը ստեղծում է անբարենպաստ սանիտարահիգիենիկ պայմաններ և վտանգ է ներկայացնում ստորգետնյա ջրերի համար: Գյուղավոր նախագծով նախատեսվում է համայնքի կոյուղացում և ցանցի միացում համայնքի մոտ անցնող կողեկտորին, ինչը կկանխի գետի աղտոտումը:

գ) **Աղմուկը.** Զրվեժ համայնքում աղմուկի հիմնական աղբյուրն ավտոտրանսպորտն է: Տրանսպորտային աղմուկը մշտական չէ և բնութագրվում է ձայնի համարժեք էներգիայի մակարդակով (L_A համ դԲԱ):

Տրանսպորտային աղմուկի մակարդակը որոշվել է հաշվարկային մեթոդով ըստ համայնքի փողոցներում տրանսպորտային հոսքերի ինտենսիվության և կազմի տվյալների, որոնք ստացվել են տեղում կատարված ուսումնասիրության հիման վրա:

Աղմուկի հաշվարկային մակարդակները որոշվել են երթևեկության առաջին շարքից 7.5մ հեռավորության վրա և կազմել են 60-63 դԲԱ:

Գործող նորմերի համաձայն դեպի աղմուկն ուղղված շենքերի համար թույլատրվում է ձայնի համարժեք մակարդակի բարձրացում 5 դԲԱ-ով, հետևաբար համայնքի բնակելի տարածքում աղմուկը չի գերազանցում սահմանային թույլատրելի մակարդակը (60 դԲԱ):

դ) **Սանիտարական մաքրում.** Համայնքում առաջացած կենցաղային աղբի քանակը կազմում է 6.7 հազ. մ³, որը տեղափոխվում և պահեստավորվում է համայնքային աղբյուսում: Աղբյուսի մակերեսը կազմում է 6.2հա:

Հաշվարկային ժամկետի ավարտին աղբի քանակը կկազմի 11.7 հազ. մ³, որը կպահեստավորվի գոյություն ունեցող աղբյուսում:

Հաշվի առնելով թափոնների աննշան քանակը նախատեսվում է դրանց վնասազերծման բնական եղանակը՝ կուտակվող թափոնները բնահողով սանիտարական շերտ առ շերտ ծածկելով և ապահովելով նորմատիվային 500մ սանիտարապաշտպանիչ գոտին:

ե) **Հողերի որակական հատկանիշները.** Թեք ռելյեֆի պատճառով Զրվեժ համայնքի հողերի էռողիան՝ համաձայն «Հայաստանում անապատացման դեմ պայքարի ծրագրի», տատանվում է 46-70% :

Համայնքի հողերի էռողիայի նվազեցման հիմնական միջոցառումներն են՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը՝ մասնավորապես, կարիլային ոռոգումը, գյուղատնտեսական հողերի տերասածն օգտագործումը և պաշտպանիչ տնկարկների օգտագործումը:

Աղյուսակ 1

Արևափայլի տևողությունը (Ժամերով)

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	2696

Աղյուսակ 2

Օդի միջին ամսեկան և տարեկան ջերմաստիճանը

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
-5.0	-4.6	1.6	8.5	13.6	17.9	22.1	22.5	18.1	11.1	3.4	-3.4	8.8

Աղյուսակ 3

Օդի միջին մինիմալ և մաքսիմալ ջերմաստիճանը

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
մինիմալ	-9.5	-8.8	2.5	3.0	7.2	10.5	14.5	14.7	10.4	5.2	-1.0	-7.4	3.0
մաքսիմալ	0.0	0.3	6.0	13.7	19.6	22.4	28.8	29.2	24.8	17.4	8.0	1.3	14.5

Աղյուսակ 4

Օդի միջին օրեկան ջերմաստիճանների որոշակի սահմաններից անցման ժամկետները և այդ սահմանները գերազանցող ջերմաստիճաններով օրերի քանակը

Ջերմաստիճանը							
-10	-5	0	5	10	15	20	25
	10.II	10.III	27.III	24.IV	24.V	29.VI	
	10.I	26.XI	10.XI	20.X	28.IX	7.IX	
	333	260	227	178	126	69	

Աղյուսակ 5

Օդի միջին ամսեկան և տարեկան հարաբերական խոնավությունը (%)

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
79	74	69	61	58	52	48	46	49	60	74	81	63

Աղյուսակ 6

Տեղումների միջին ամսեկան և տարեկան քանակը (մմ)

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XI- III	IV- X	Տարի
36	36	45	58	68	45	27	14	18	36	40	27	184	266	450

Աղյուսակ 7

Քամու միջին ամսեկան և տարեկան արագությունը (մ/վրկ)

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
2.3	2.7	2.6	2.6	2.5	3.0	3.0	2.8	2.6	2.7	2.4	2.1	2.6

Աղյուսակ 8

Քամու ուղղություն և շտիլի կրկնելիություն (%)

Ամիսներ	Հյուսիս	Հյուսիս-արևելք	Արևելք	Հարավ-արևելք	Հարավ	Հարավ-արևմուտք	Արևմուտք	Հյուսիս-արևմուտք	Շոփի
I	3	11	46	18	14	5	2	1	14
II	2	10	39	18	18	8	4	1	11
III	3	9	29	20	21	11	6	1	10
IV	3	12	31	19	15	12	7	1	14

V	4	10	26	17	20	13	7	3	12
VI	5	18	22	14	16	13	8	4	8
VII	10	23	23	8	14	9	9	4	12
VIII	6	23	26	10	11	14	7	3	13
IX	3	13	36	14	12	14	7	1	11
X	1	9	48	11	14	13	3	1	8
XI	1	9	52	8	16	11	2	1	11
XII	2	10	49	13	17	6	2	1	16
Տարի	4	13	35	14	15	11	6	2	12

Աղյուսակ 9

Առաջին և վերջին ցրտահարությունները ու անսառնամանիք Ժամանակաշրջանի
տևողությունը

Ցրտահարության ամսաթիվը		Անսառնամանիք Ժամանակաշրջանի տևողությունը
Վերջին	առաջին	
միջինը	միջինը	միջինը
19.IV	26.X	189

Աղյուսակ 10

Զյունածածկույթի գոյացման և վերացման միջին Ժամկետները

Զյունածածկույթի գոյացման Ժամկետները	Զյունածածկույթի վերացման Ժամկետները	Զյունածածկույթի օրերի քանակը
15.XII	19.III	56

Աղյուսակ 11

Զյունածածկույթի միջին տասնօրյակային բարձրությունը (սմ)

Դեկտեմբեր			հունվար			փետրվար			մարտ			Զյունածածկույթի տասնօրյակային առավելագույն բարձրությունը		
1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	բնակչություն	սարսահման	սիրիոս
2	4	6	9	12	13	13	10	5	-	-	18	-	-	-

Աղյուսակ 12

Թթվածնի կշռային պարունակությունը մթնոլորտում (q/m^3)

հունվար	ապրիլ	հունիս	հոկտեմբեր
263	249	238	254

Աղյուսակ 13

Օդաբուժության օդերևաբանական պայմանները (%)

Եկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճանը (քամու առկայությամբ) ԷԷԴ					Էֆեկտիվ ջերմաստիճանը (առանց քամու) ԷԴ			
ամիսներ	$\leq 8^0$	$9-16^0$	$17-22^0$	$\geq 23^0$	$\leq 8^0$	$9-16^0$	$17-22^0$	$\geq 23^0$
մայիս	28	51	21	-	-	44	55	1
հունիս	3	29	52	16	-	4	60	36
հուլիս	-	5	50	45	-	1	24	75
օգոստոս	-	10	36	54	-	1	29	70

սեպտեմբեր	2	30	55	13	-	3	79	18
հոկտեմբեր	30	61	9	-	-	76	24	-

Արևարուժության օդերևաբանական պայմանները (%)

Ուաղիացիոն-էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճանը (քամու առկայությամբ) RЭТ					Ուաղիացիոն-էֆեկտիվ ջերմաստիճանը (առանց քամու) RЭТ			
ամիսներ	$\leq 8^{\circ}$	$9-16^{\circ}$	$17-22^{\circ}$	$\geq 23^{\circ}$	$\leq 8^{\circ}$	$9-16^{\circ}$	$17-22^{\circ}$	$\geq 23^{\circ}$
մայիս	-	28	35	37	-	20	39	41
հունիս	-	3	20	77	-	-	18	82
հուլիս	-	-	8	92	-	-	3	97
օգոստոս	-	-	10	90	-	-	5	95
սեպտեմբեր	-	5	24	71	-	-	22	78
հոկտեմբեր	2	54	35	9	-	46	30	24

Աղյուսակ 14

Դահուկային սեզոնի սկիզբը, վերջը և տևողությունը ըստ բարձրության

Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	Սկիզբը			Վերջը			Տևողությունը (օրերի քանակը)		
	միջին	հարավային լանջերին	հյուսիսային լանջերին	միջին	հարավային լանջերին	հյուսիսային լանջերին	միջին	հարավային լանջերին	հյուսիսային լանջերին
1800	22.XII	8.1	6.XII	21.III	6.III	5.IV	89	57	120
1900	17.XII	2.1	2.XII	27.III	11.III	13.IV	100	68	132
2000	11.XII	25.XII	27.XI	1.IV	16.III	17.IV	110	81	141
2100	7.XII	20.XII	24.XI	7.IV	23.III	22.IV	121	93	149
2200	1.XII	10.XII	20.XI	13.IV	30.III	26.IV	133	110	157
2300	24.XI	3.XII	17.XI	21.IV	6.IV	2.V	148	124	166
2500	15.XI	20.XI	10.XI	3.V	15.IV	11.V	169	146	182
3000	28.X	1.XI	25.X	5.VI	30.V	10.VI	220	210	228

Աղյուսակ 15

Յուրաքանչյուր (t = 14.9°), Տաք (t = 20.0°), Շոգ (t ≥ 25.0°) օրերի կրկնվածությունը (օրերով)

(հաշվի է առնվում օրական միջին ջերմաստիճանը)

ամիսներ									
t	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
14.9	25	10	2	-	-	7	18	29	
20.0	3	11	8	7	6	5	11	1	
25.0	2	9	20	24	25	18	2	-	

Աղյուսակ 16

Առողջ մարդու դուրս գտնվելու համար բարենպաստ օրերի կրկնվածությունը (օրերով)

առանց սահմանափակումների (ԱՍ)

մասնակիորեն սահմանափակումով (ԱՍ)

սահմանափակումով (Ա)

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
ԱՍ	22	19	24	24	24	21	16	17	25	26	27	24
ԱՍ	1	2	2	2	4	6	6	9	4	2	1	1
Ա	8	7	5	4	3	3	9	5	1	3	2	6

1.3. Շրջակա միջավայրի բարելավման միջոցառումները և կառուցապատման առանձնահատկությունները

Նկատի ունենալով համայնքի տեղադիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները /թույլ բլրակային, միատարր, համեմատաբար հարթ/, բուսածածկից ազատ չիրացված տարածքները, նպատակահարմար է Զրվեժ-Ողջարերդ գոտին՝ ընդհանուր առմամբ, և մասնավորապես, Զրվեժի գյուղական համայնքը զարգացնել որպես հանգստի, զբոսանքի, սպորտի և բուժման քաղաքամերձ գոտի՝ մայրաքաղաքի բնակչության համար։ Նշված ճյուղերի զարգացման նպատակով անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածքի առկայության ապահովում։ Մասնավորապես, օգտագործելով շրջապատի պատմա-ճարտարապետական, քաղաքակրթության վկայության վայրերը, զբոսաշրջության զարգացման համար հարկ է նախատեսել հյուրանոցներ, կեմպինգներ և նմանատիպ այլ օրյեկտներ։

Գլխավոր հատակագծով նախատեսվում են համայնքի համայնքի բնակլիմայական պայմաններից բխող և շրջակա միջավայրի բարելավման ուղղված հնտևալ քաղաքաշինական և տեխնոլոգիական միջոցառումները, որոնք պետք է նախատեսվն կառուցապատման նպատակով նախագծային փաստաթղթնի մշակման ժամանակ։

- առողջարանների, հանգստյան տների, պանսիոնատների, բնակելի միկրոշրջանների նախագծման ժամանակ հաշվի առնել տեղանքի ինչպես լանդշաֆտա-կլիմայական, այնպես էլ միկրոկլիմայական առանձնահատկությունները,
- ընդարձակել լողավազանների, ցայտաշատրվանների, արհեստական լճակների կազմակերպումը՝ միկրեկլիմայական պայմանները մեղմացնելու նպատակով,
- կլիմայաբուժության կազմակերպման նպատակով նախագծային աշխատանքներ իրականացնելիս, հիպերիմասոլյացիայի ազդեցությունից խուսափելու համար նախատեսել մասնակի օդափոխում ապահովող հատուկ սարքեր, այդ թվում՝ պտտվող տենտերի օգտագործմամբ արևաբուժության իմպուլսային մեթոդի կիրառման համար,
- հնարավորինս սահմանափակել արևի ուղիղ ճառագայթների ու տաքացած օղի ներթափանցումը շենքեր, մասնավորապես՝ պաշտպանական սարքեր բացվածքներին, բնակարանների և շրջապատող տեղանքի արհեստական հովացում, առարիխաների մասնակի օդափոխում,
- քամուց և փոշուց պաշտպանության միջոցների կիրառում, մասնավորապես՝ միակցված կիսափակ կառուցապատում, որի անկյունը ուղղված է դեպի գերիշխող ուժեղ քամիների կողմը։ Քամապաշտպան էֆեկտիվ միջոց են նաև ծառատուները, որոնք նաև կատարում են օդի թթվածնի կուտակչի դեր,
- հակաադմկային միջոցառումների իրականացում, հատկապես Երևան-Գառնի մայրուղու հարակից տարածքներում և այլն։

Համայնքի գարգացման հիմնական ուղղվածությունն ընդունելով գրոսաշրջության և ռեկրեացիոն ճյուղերը, մասնավորապես՝ հաշվի առնելով այգեգործական կառուցապատման հատվածը, գլխավոր նախագծով նախատեսվում են մթնոլորտային օդի պահպանության հետևյալ միջոցառումները.

- համայնքի բնակելի և հասարակական շենքերի ջերմամատակարարման համակարգի կատարելագործում,
- համայնքի ճանապարհա-փողոցային ցանցի բարելավում,
- համայնքի կառուցապատված հատվածի կանաչապատման ընդարձակում, ինպես նաև՝
- ավտոտրանսպորտի զինումը արտանետվող գազերի չեղոքացուցիչներով՝ համաձայն ՀՀ կառավարության 17/7/2005թ. «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1033-Ն որոշման պահանջների:

1.7. Կանաչապատում

Համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը ներկայում կազմում է 79.05 հա, այդ թվում սահմանափակ օգտագործման՝ 55.31 հա, հատուկ նշանակության՝ 23.74 հա:

Համայնքի կանաչ տարածքների ընդհանուր բավականաչափ մեծ մակերեսում բացակայում են ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները (գրոսայգիներ, պուրակներ և բնակչության ապահովածությունը հասցնել 29.93 մ²/մարդ (աղյուսակ 17)):

Գլխավոր հատակագծով նախատեսվում է հիմնադրել 29.93 հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ (գրոսայգիներ, պուրակներ և բնակչության ապահովածությունը հասցնել 29.93 մ²/մարդ (աղյուսակ 17)):

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կավելանա 22.08 հա-ով՝ նորաստեղծ բաղամասերի կանաչապատման հաշվին և կկազմի 77.39 հա: Այսպիսով գլխավոր հատակագծի իրականացման արդյունքում համայնքի կանաչապատվածությունը կավելանա 112.59 հա-ով և կկազմի 191.64 հա:

Աղյուսակ 17. Ջրվեժ համայնքի կանաչ տարածքների ներկայիս և նախագծային ցուցանիշները

Կանաչ տարածքների ֆունկցիոնալ նշանակությունը	Արդի վիճակը 2006 թ		Նախագծային ցուցանիշները 2020 թ		
	հա	մ ² /մարդ*	Ընդհա-նուր մակերեսը (հա)	այդ թվում նորաստեղծ	մ ² /մարդ**
1. Ընդհանուր օգտագործման	0.0	0.0	29.93	29.93	29.93
2. Սահմանափակ օգտագործման	55.31	74.74	77.39	22.08	77.39
3. Հատուկ նշանակության	23.74	32.08	84.32	60.58	84.32
Ընդամենը	79.05	106.82	191.64	112.59	191.64

* բնակչության ներկայիս թվաքանակը՝ 7400 մարդ

** բնակչության հեռանկարային թվաքանակը՝ 10000 մարդ

1.4. Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն

Կոտայքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում գրուաշրջության և ռեկրեացիոն գոտիները առավել զարգացնելու համար:

Զրվեժում կատարված պեղումներով բացահայտվել են միջնադարյան ճարտարապետության երկու՝ Զոսադրյուր վայրի և գերեզմանատան համալիրները: Զոսադրյուրի համալիրի կազմում են դարչնագույն սրբատաշ տուֆից կառուցված VI-VII դր. խաչաձև գմբեթավոր եկեղեցին, դրան հարավից կից XII-XIII դր. միանավ բաղածածկ եկեղեցին և երկու փոքր մատուռներ: Պահպանվել են հուշարձանախմբի պատերի ստորին շարքերը և քանդակազարդ բեկորները: Գերեզմանատան IV-V դր. հուշահամալիրը բաղկացած է եկեղեցուց, կոթողից և դամբարանից: Զրվեժի տարածքում գտնվում են գմբեթավոր սրահի ավերակներ, մատուռներ, խաչքարեր: Ուշագրավ են Խաչատուրի տապանաքարը և խաչքարը:


Համաձայն գործող օրենսդրությամբ սահմանված կարգի, հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության, որտեղ.

հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական ու հոգևոր մշակույթի իմացության համար պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային բացառիկ այլ արժեք ներկայացնող հուշարձանները (օրինակ՝ Զոսադրյուրի վանական համալիրը 6-13-րդ դր.),

տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային հուշարձանները (օրինակ՝ Ար. Աստվածածին եկեղեցին (Կաթողիկե) 1890թ.):

Կոտայքի մարզի տարածքի պատմամշակութային հուշարձանների թվին են դասվում հնագիտական քարեղարյան կայաններ, վիմագրական հուշարձաններ, հնագույն և միջնադարյան բնակատեղիներ, պաշտամունքային և քաղաքացիական կառույցներ, կամուրջներ և այլն, պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ:

Հանրապետության բոլոր մարզերի անշարժ հուշարձանների համար կատարվել է հաշվառում և կազմվել են համապատասխան պետական ցուցակներ, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2003թ դեկտեմբերի 24-ի N 1793-Ն որոշմամբ:



Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

Ջրվեժ համայնքի գրոսաշրջային ռեսուրսներում կարող են ներառվել Երևան քաղաքի տեսարժան վայրերը, ինչպես նաև՝

Գառնի համայնքի՝ Գառնի ամրոց, III-II դդ մ.թ.ա., Գառնի տաճարը I դ, ուրարտական սեպագիր VII դ մ.թ.ա.

Գեղարդ համայնքի՝ Գեղարդավանք կամ Այրիվանք համայիր XII-XIII դդ, Սուրբ Գրիգոր կիսաքարանձավային եկեղեցի XII դ, Սուրբ Աստվածածնի եկեղեցի 1215 թ., Երկու քարանձավային եկեղեցիներ XIII դ, եզակի քարանձավային մենախցեր, խաչքարեր:

1.5. Սեյսմիկ պայմանները

Ջրվեժ համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման 1:5000 մասշտաբի քարտեզը կազմվել է ինժեներա-երկրաբանական, սեյսմաբանական նոր դաշտային դիտարկումների ու արխիվային փաստացի նյութի և այլ տվյալների հիման վրա, համայիր մոտեցումով: Քարտեզը կազմելիս առանձնապես մեծ տեղ է հատկացվել սեյսմիկ վտանգի մակարդակի փոփոխման որոշման ակուստիկ կոշտությունների մեթոդին, որպես գյուղավոր մեթոդի: Առանձնացված սեյսմիկ գոտիներում վտանգի մակարդակը գնահատված է 0.40- 0.45g: Յուրաքանչյուր գոտու համար տրված է նաև գրունտների տատանման գերակշռող պարբերությունները:

Ջրվեժում մեծ տարածում ունեն ստորգետնյա հնարավոր ջրածածկի գոտիները, որոնք դասվել են շինարարության համար անբարենպաստ տարածքների շարքը: Քարտեզի վրա որոշ տարածքներում, ուր հորիզոնական արագացման չափի կողքին դրված է աստղանիշներ, շինությունների նախագծման ժամանակ պահանջվում է ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծային նորմերի 1.4..2 և 1.4.1 կետերի կիրառում: Այդ տարածքները բավականին մեծ մակերես են կազմում, հատկապես ջրածածկերի տեսակետից:

2.Հեռանկարային կառուցվածքահատակագծային զարգացման ուղղությունները

ՀՀ տարաբնակեցման գյուղավոր հատակագծի հիմնադրույթներից ելնելով , համայնքի հեռանկարային առավելագույն բնակչության թիվը ընդունվել է՝ 10 հազար մարդ: Ընդ որում, գյուղի բնակչության առավելագույն թվաքանակին հասնելու ժամկետները կապվում են հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերի հետ:

Վերլուծության և համալիր գնահատականի արդյունքում ընտրվել են կառուցապատման համար նախընտրելի տարածքները, տրվել են պահանջվող ինժեներական նախապատրաստման միջոցառումները և դրանց իրականացման ուղիները: Շանապարհների, էներգետիկայի, գերեզմանատների և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքները, որոնք ներկայում արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով՝ առաջարկվում է վերափոխել բուժերային գոտիների, որոնցում պետք է արգելվեն նոր բնակելի և հասարակական կառուցապատման աշխատանքները:

Համայնքի տարածքի ճարտարապետակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- գյուղի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, իին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում,
- արտադրական և գյուղատնտեսական օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական գոտիների նորմատիվային պահանջների պահպանման ապահովում և կանաչ գոտիների ընդլայնում,
- սեյսմիկ վտանգի և այլ արտածին երկրաբանական երևույթների առկայության պայմաններում գյուղական համայնքի կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառական օգտագործումը և կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, գյուղական համայնքի տարածքում առաջարկվում է կիրառել կառուցապատման հետևյալ սկզբունքները.

- առավելապես տնամերձ հողանասերով՝ ցածրահարկ առանձնատնային կառուցապատման նոր բնակելի թաղամասերի կազմակերպում,
- տարածքում հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով նոր և գոյություն ունեցող բնակելի թաղամասերը,
- ճանապարհափողոցային ցանցի կատարելագործում,
- անտառապուրակային և ունկընացիոն գոտիների ձևավորում:

Առավելագույնս կանոնակարգվել են գյուղի հասարակական սպասարկման օբյեկտների գոտիները, գոյություն ունեցող հաղորդակցուղիների ցանցը և կանաչապատման համակարգը: Համայնքի միջնամասային հատվածում կազմակերպվել են առանձնատնային կառուցապատման նոր բնակելի թաղամասեր, որոնք բաժանված են հանրային օգտագործման համար նախատեսվող գրոսայգիներով և այգեպուրակային տարածքներով: Նոր բնակելի թաղամասեր են կազմակերպվում նաև հյուսիսային մասում, Երևան-Գառնի-Գեղարդ մայրուղու ձախակողմյան տարածքներում, որտեղ այս գործընթացը վերջին տարիներին արագ տեմպերով զարգանում է: Ներքին փողոցային ցանցի կատարելագործման շնորհիվ հարմարավետ կապեր են ստեղծվում նոր բնակելի թաղամասերի և ուղղեացիոն տեղամասերի միջև: Առանձնացվել են համապատասխան գոտիներ՝ նոր դպրոցական և նախադպրոցական կառույցների տեղադրման համար: Արևելքում գտնվող՝ նախկինում այգեգործական ընկերությունների թաղամասերը օրգանապես կապվել են գյուղի ընդհանուր հատակագծային և ֆունկցիոնալ կառուցվածքի հետ: Զրվեժի հարավային մասում, Զրվեժ տանող շրջանցիկ մայրուղու հարևանությամբ նախատեսվում է տեղակայել մարզական նոր համալիրը:

2.1.Տրանսպորտ

Զրվեժ գյուղի պատամական հատվածը առանձնանում է նեղ ու անկանոն փողոցներով: Փողոցները, բացառությամբ կենտրոնական՝ Մելքոնյան փողոցի սկզբնամասի, անգամ մայթեր չունեն: Գյուղի՝ արևմուտքից-արևելք ձգվող փողոցի լայնությունը տեղ-տեղ կազմում է ընդհամենը 5-6 մետր, և հանդիպակաց ավտոմոբիլները դժվարությամբ են անցնում: Պատվածք ունեն միայն Մելքումյան ու դեպի Եկեղեցի տանող փողոցները:

Գյուղի ներսում տրանսպորտի երթևեկությունը սակավ է, բացառությամբ Մելքումյան փողոցի սկզբնամասի: Զրվեժի հիմնական կապը մայրաքաղաքի հետ է, երթուղային միկրոավտոբուսները նաև հասարակական տրանսպորտի դեր են կատարում:

Զրվեժի համայնքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Գառնի-Գեղարդ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհը, որը նաև կարևոր գրոսաշրջային երթուղի է: Համայնքի արևմտյան եզրով է անցնում 1980-ական թվականներին կառուցված Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհը, որի Զրվեժ-Սովետաշեն հատվածի որոշ տեղամասեր ենթարկվել են սողանքների: Մոտակա երկաթուղային կայարանը Աբովյանն է, ընդհամենը 10կմ հեռավորությամբ, «Զվարթնոց» օդանավակայանը գտնվում է 24 կմ հեռավորության վրա:

2.1.1.Տրանսպորտային ուղիների հեռանկարային զարգացման ուրվագիծ

Նախագծի մշակման ընթացքում կատարված տրանսպորտի երթևեկության հաշվառման արդյունքները ցուցադրված են քարտագրամում: Տրանսպորտի երթևեկության աշխուժությունը է տիրում միայն բնակավայրի հյուսիսային մասին հարող՝ դեպի Գառնի տանող ճանապարհին, որի արևմտյան հատվածը կառուցված է I կարգի ճանապարհի

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեժ գյուղական համայնքի գլխավոր հատակագիծ Արդիական ՍՊԸ
նորմերով, իսկ արևելյանը անջատիչ գոտի չունի և երթևեկային մասի լայնությունը կազմում է 17.0մ: Երթևեկության ժամային անցուղարձլ կազմում է 768 ավտոմոբիլ, իսկ բեռնվածության մակարդակը՝ 0.32, ուստի փողոցն աշխատում է մասնակի ազատ ռեժիմով: Փողոցի այդ հատվածում են տեղադրված առևտրի բազմաթիվ կետեր և մայթերը համարյա նվաճված են:

Արտաքին տրանսպորտի զարգացման կարևորագույն հեռանկարային խնդիրը՝ Երևանի արևելյան շրջանող ճանապարհի վերականգնումն է: Այդ ճանապարհի լիարժեք գործարկումից հետո տարանցիկ երթևեկությունը Զրվեժից լիովին դուրս կբերվի, բացառությամբ այն եզակի ավտոմոբիլների, որոնք Նոր-Նորքից կմեկնեն Գառնի և Գեղարդ:

Անհրաժեշտ է գործող՝ Երևան-Զրվեժ-Վարդենիս երկարուղյան վերականգնել լիարժեք օգտագործման համար:

3. Ինժեներական սարքավորումներ

3.1. Զրամատակարարում

Զրամատակարարման և կենցաղային կոյուղացման բաժինը մշակելիս, որպես ելակետային նյութեր հանդիսանում են՝

Զրվեժ համայնքի գլխավոր հատակագծի առաջադրանքը, Զրվեժ համայնքի գլխավոր հատակագծի տեխնիկատեսական ցուցանիշները և զարգացման ուղղվածությունը, «Երևանջուր» ընկերության և Զրվեժ համայնքի կողմից տրամադրված նյութերը գործող համակարգերի վերաբերյալ:

Ներկայումս Զրվեժ համայնքը ջուր ստանում է Երևան քաղաքի խմելու ջրամատակարարման համակարգից: Հին բնակավայրերը ջուր հիմնականում ստանում են Զորադրյուր տանող ճանապարհի մոտ 1414 նիշին գոյություն ունեցող 7500մ^3 ծավալով Երևան քաղաքի օրվա կարգավորման ջրամբարից, որի ծավալը անբավար է ջրամբարի սպասարկման տարածքի համար, իսկ նոր թաղամասերը՝ անմիջապես Կաթնաղբյուր-Երևան ջրատարներից:

Զրաբաշխիչ ցանցը կառուցված է հիմնականում 30-50 տարի առաջ և գտնվում է տեխնիկապես ոչ բարվոր վիճակում: Ցանցը գոտիավորված չէ:

Հաշվարկային ջրապահանջը.

Զրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է ԸՆԿ42.04.01-84*-ով սահմանված պահանջները: Հաշվարկվել են նաև հակահրդեհային և վթարային պաշարների անհրաժեշտ մեծությունները և դրանց վերականգնման համար անհրաժեշտ ելքերը: Նշված մեծությունների հաշվարկը բերված է ստորև՝ աղյուսակային ձևով:

Նպատակահարմար է հին բնակավայրի և Գառնի-Երևան հին ճանապարհի երկայնքով մինչև 1390մ նիշը կառուցվող թաղամասի ջրամատակարարումը իրականացնել 1414 նիշին գտնվող Երևան քաղաքի օրվա կարգավորման ջրամբարից, սակայն կառուցել նոր ջրամբար՝ 3000 m^3

ՀՀ Կոտայքի մարզի Զրվեծ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ Արդիտուն ՄՊՀ
ծավալով, որը կսպասարկի միայն Զրվեծ գյուղը և որտեղ կպահպեն հակարդեհային և
վթարային ծավակները:

1390.0մ-ից բարձր նորակառույց թաղամասերի համար, որոնք այսօր ջուր են ստանում
անմիջապես ջրատարից, 1450 մ նիշի վրա կառուցել նոր օրվա կարգավորման ջրամբար՝ 1700
մ³ ծավալով, ջուրը ջրամբար մղելով պոմպերի միջոցով:

Յանցի գոտունորման հիմքում տրված են նշված ՕԿՁ-ների սպասարկման տարածքները:

N	Սպառողները	Սպառման նորմը/օր	Զրապահանջը 2006թ.			Զրապահանջը զաշվարկային 2020թ.		
			քանակ	մ ³ /օր	լ/վրկ	քանակ	մ ³ /օր	լ/վրկ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Բնակչությունը	200	7400	1480.0	17.13	10000	2000.0	23.15
2	Արդյունաբերությունը	Բնակչության ծախսը 20%	-	296.0	0.34	-	400.0	4.63
	Ենթարկմանը՝			1776.0	17.47		2400.0	27.78
	Չնախատեսված ծախսեր 10%			177.6	1.75		240.0	2.79
	Հոսակորուսմներ		50%	1953.6	19.22	30%	1131.4	13.10
	Հ Ա Դ Ա Մ Ե Ա Ր՝			3907.2	38.44		3771.4	43.67

Երևան քաղաքի 1414մ նիշի ջրամբարի հարեանությամբ կառուցվող նոր ջրամբարից
կսպասարկվի 7000 մարդ, իսկ 1450 նիշին կառուցվող ջրամբարից՝ 3000 մարդ:

I գոտու օրվա կարգավորման ջրամբարի ծավալը կազմում է՝

- կարգավորիչ ծավալը՝

$$W_{qf} = Q_{\max,op} [1 - K_f + (K_d - 1)(K_f/K_d)^{K_f/K_d-1}]$$

$$Q_{\text{միջ.}} = 30.57 \text{ լ/վրկ}$$

$$Q_{\max,op} = 30.57 \times 1.3 = 39.74 \text{ լ/վրկ} = 3433.6 \text{ մ}^3/\text{օր}$$

$$Q_{\max,d.} = 39.74 \times 1.4 \times 1.37 = 76.22 \text{ լ/վրկ}$$

$$K_f = 1; K_d = 2.49$$

$$W_q = 3433.6 [1 - 1 + (2.49-1)(1/2.49)^{2.49/2.49-1}] = 741.7 \text{ մ}^3$$

- հակարդեհային ծավալը՝

$$(15+50) \times 3.6 \times 3 + 76.22 \times 3.6 \times 3 = 1039 \text{ մ}^3$$

Հաշվի առնելով սեյսմիկ պահանջները, ընդունվում է հակարդեհային կրկնակի ծավալը՝
հավասար 2078 մ³:

Այսպիսով I գոտու ծավալը կազմում է 2820 մ³:

II գոտու օրվա կարգավորման ծավալը կազմում է՝

- կարգավորիչ ծավալը՝

$$Q_{\text{միջ.}} = 13.1 \text{ լ/վրկ}$$

$$Q_{\max,op} = 13.1 \times 1.3 = 17.03 \text{ լ/վրկ}$$

$$Q_{\max,d.} = 17.03 \times 1.4 \times 1.55 = 36.96 \text{ լ/վրկ}$$

$$K_f = 1; K_d = 2.82$$

$$\text{ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղական համայնքի գյուղավոր հատակագիծ} \quad \text{Արիստոն ՄՊՀ}$$

$$W_q = 1471.4 [1 - 1 + (2.82-1)(1/2.82)]^{2.82/2.82-1} = 538 \text{ մ}^3$$

- հակահրդեհային ծավալը՝

$$(10+5) \times 3.6 \times 3 + 36.96 \times 3.6 \times 3 = 561 \text{ մ}^3$$

Հաշվի առնելով սեյսմիկ պահանջները, ընդունվում է հակահրդեհային կրկնակի ծավալը՝ հավասար 1122 մ³:

Այսպիսով II առաջին գոտու ծավալը կազմում է 1660 մ³:

Բնակչության կողմից ջրօգտագործման նորմերը ընդունվել է 2001. մարտ/օր հաշվի առնելով այն հաճախանքը, որ Ջրվեժը Երևան քաղաքի սպասարկման գոտիում է:

3.2. Կենցաղային կոյուղի

Ջրվեժ համայնքը կոյուղացված չէ: Կոյուղացումը իրականացվում է հիմնականում բակային ներծծման հորերով և երթեմն պարբերաբար դատարկվող բետոնե հորերով:

Կոյուղու հաշվարկային ելքերը

Կեղտաջրերի հաշվարկային ելքերի որոշման համար, որպես հիմք ընդունվել են ՇՆԿ 2.04.02-84*-ը, Ջրվեժ համայնքի գյուղավոր հատակագծով որոշված աղքարնակչությունը, հանգստացողների քանակը հաշվարկային տարում, արդյունաբերության զարգացումը և ուղղվածությունը:

Ջրվեժ համայնքը կոյուղացնելիս կեղտաջրերը միացվում են Երևան քաղաքի Բազալտ գործարանից, Սարի թաղ և ԵԱԿ գնացող կոլեկտորին;

Կեղտաջրերի մաքրումը իրականացվում է Երևան քաղաքի կոյուղու մաքրման կայանում:

Կեղտաջրերի ելքերի հեռանկարային հաշվարկը բերված է աղյուսակային ձևով:

Կոյուղու ցանցեր ստեղծելու և շրջակա միջավայրի սանհիտարա-հիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մեծածավալ աշխատանքներ:

Համակարգի վերակառուցման ժամանակ պետք է հաշվի առնել արտակարգ իրավիճակում ջրամատակարարման և կոյուղացման ապահովումը:

Այս առումով նախատեսվում է.

ՕԿՁ-ներում հակահրդեհային ծավալների պահում,

Բաշխիչ ցանցերը պետք է լինեն գոտիավորված, օղակային և ապահոված հակահրդեհային հիդրանտներով:

N	Սպառողները	Սպառման նորմը/օր	Կոյուղու ելքերը 2004թ.				Կոյուղու ելքերը 2020թ.			
			քանակ	մ ³ /օր	լ/վրկ	max լ/վրկ	քանակ	մ ³ /օր	լ/վրկ	max լ/վրկ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Բնակչությունը	200	7400	1480.0	17.13		10000	2000.0	23.15	
2	Արդյունաբերությունը	Բնակչու-	-	296.0	0.34		-	400.0	4.63	

		թյան ծախսը 20%							
3	Չնախատեսված ծախսեր	10%		177.6	1.75			240.0	2.79
	Ենթարժամներ՝			1953.6	21.22	40.3		2640.0	30.57
	Անվերադարձ կորուստ 10%			195.4	2.12			264.0	3.1
	ԵԱԿ արվագ ջրաքանակը			1758.2	19.1			2376.0	27.47

3.3. Հեղեղատար կոյուղի

Զրվեծ համայնքի սանհիտարակիզինիկ պատշաճ մակարդակի ապահովման և բարեկարգման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում հեղեղատար կոյուղին:

Հեղեղատար կոյուղու նպատակն է գյուղական համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի հեռացումը: Ներկայումս Զրվեծ համայնքը հեղեղատար կոյուղի չունի և հալոցքի ու անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման բափկում են Զրվեծ գետը՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ Երևանի այն տարածքներում, որոնցով անցնում է գետը:

Հեղեղատար ջրերը, գետը լցվելուց առաջ պետք է անցնեն համապատասխան մեխանիկական մաքրում: Համաձայն ՇՆԿ 2.04.03-85-ի 1.2-րդ կետի, անհրաժեշտ է ապահովել կեղտոտված ջրերի մաքրումը, առաջացող ջրերի տարեկան ելքի շուրջ 70%-ի չափով:

Անձրևաջրերի թողարկների տեղերը պետք է համաձայնեցվեն սանհիտարական և բնապահպանական հսկողությունն իրականացնող մարմինների հետ:

Հեղեղային կոյուղին պենք է ընդգրկի գյուղական համայնքի ամբողջ տարածքը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի.

Անդամական ցանցեր - 5.0 կմ

Փողոցային ցանցեր - 15.0 կմ

Համականեր՝ - 20.0 կմ

Հեղեղատար ցանցերը, կախված բաղամասերի նշանակությունից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/թետոնե, բուշե և այն $\varnothing 300 \div 500$ խողովակներ:

3.4. Ոռոգում

Զրվեծ համայնքի ոռոգման աղբյուր է հանդիսանում Ազատի ոռոգման պոմպային համակարգը և Կոտայքի ջրանցքը, որի թողունակությունը զգալիորեն գերազանցում է համայնքի պահանջը: Կոտայքի ջրանցքը գրավում է իշխող դիրք ոռոգելի տարածքների նկատմամբ: Գործող ցանցը չի բավարարում համայնքի պահանջը:

Գյուղավոր հատակագծում նախատեսվում է ոռոգման համակարգի վերակառուցում: Ոռոգման համակարգի հաշվարկային ելքերը որոշվել են համաձայն գյուղավոր հատակագծով

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղական համայնքի գլխավոր հատակագիծ Արխիտոռն ՄՊՀ
նշված ոռոգելի մակերեսների, ԸՆԿ2.04.02-84-ով սահմանված նորմատիվների: Հաշվի են
առնվել նաև «Հայջրնախագիծ» ինստիտուտի տվյալներն ու նյութերը:

Ոռոգման ռեժիմները ընտրված են հաշվի առնելով խոնավության դեֆիցիտը հողի
ակտիվ շերտում, ըստ կլիմայական պայմանների միջին տարվա համար:

Որպես հաշվարկային ընդունված է երաշտ տարվա ոռոգման ռեժիմը, այսինքն
վեգետացիորեն շրջանում ջրի 95%-ի ապահովության պայմանը:

Ջրվեժ համայնքի ոռոգելի տարածքների և լվացվող ասֆալտապատ տարածքների
մակերեսը համաձայն գլխավոր հատակագծի, հաշվարկային տարում կազմում է 780.0 հա:
Ոռոգման և փողոցների լվացման համար պահանջվող ջրի ծախսը կազմում է 850.0 լ/վրկ:
Ոռոգման համակարգը վերակառուցելու և սարքավորելու համար անհրաժեշտ է կառուցել
ջրատարներ և բաշխման ցանց:

3.5. Գազամատակարարում և ջեռուցում

Ջրվեժ համայնքը գազաֆիկացված է 90%-ով: Քաղաքի գազամատակարարման
համակարգը երկաստիճանային է: Գլխավոր հատակագծով նախատեսվում է, որ
հեռանկարում բնական գազով պետք է ապահովվի՝

- բոլոր բնակելի և հասարակական նշանակության այլ շենքերի (կրթական, մշակութային,
վարչական և այլն) ջեռուցումը,
- բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ
ջերմության պահանջարկը,
- արտադրական նշանակության օբյեկտների տնտեսական և տեխնոլոգիական
կարիքների համար անհրաժեշտ ջերմության պահանջարկը:

Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական
բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և
սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են
գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Բազմաբնակարան շենքների ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է
իրականացվել կամ անհատական բնակարանային համակարգերով կամ կենտրոնացված
եղանակով կցակառույց (ինչպես նաև գոյություն ունեցող) կաթսայատներից:

Նշված հարցերը իրենց լուծումը կարող են ստանալ կոնկրետ շենքերի աշխատանքային
նախագծերի մշակման ժամանակ: Ընդ որում, ջերմամատակարարման եղանակի ընտրության
համար որոշիչ նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքը, թե այդ շենքերում ինչ
հնարավորություններ կան առանձին բնակարաններից ծխագագերի հեռացման համար:
Սննդի պատրաստումը բոլոր տեսակի բնակելի շենքերում իրականացվում է
գազասալիկներով:

Դպրոցների, մատուցանութեալների, հիվանդանոցային, հյուրանոցային և վարչական
